

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՊԱՐՍԻՑ ԴԱՍԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒ
ՌՈՒՂԱՔԻԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Լեզվական փոխազդեցություններն ավելի հաճախ դրսևորվում են թարգմանության ոլորտում: Հայ-պարսկական լեզվական շփումների ձևերից մեկը պարսկական դասական քնարերգության թարգմանություններն են՝ կատարված տարբեր ժամանակներում, տարբեր հեղինակների կողմից: Ամեն մի սերունդ, նորովի է անդրադառնում հայրենի և այլազգի դասականներին, քանի որ թարգմանությունը նույնպես հմանալու հատկություն ունի. փոխվում են ժամանակները, փոխվում են հոգևոր արժեքներն ու գնահատման չափանիշները:

Հայ ընթերցողին վաղուց են ծանոթ պարսկական պոեզիայի դասականներ Ֆիրդուսին, Խայյամը, Ռուդաքին, Հաֆեզը, Սաադին և ուրիշներ: Նրանց ստեղծագործությունների թարգմանության ժամանակ հայ թարգմանիչները պարսկական մշակութային և լեզվամտածողական ինքնատիպ երևույթներն արտահայտելու համար դիմել են թարգմանություններին, բառապատճենումներին և ուղղակի փոխառության: Փոխառության պարագայում առաջանում են տառադարձման, հնչադարձման և այլ հարցեր, որոնք տարբեր կերպ են լուծվում:

Հայտնի է, որ հնչյունագրային փոխարկման գործընթացում փոխատու լեզվի հնչյունական համակարգի հնարավորությունները վճռորոշ նշանակություն ունեն, կարևորվում են նաև փոխատու և փոխառու լեզուների հնչյունական համակարգերի նմանություններն ու տարբերությունները: Ժամանակի ընթացքում օտար բառերի հայերեն տառադարձման սկզբունքներն անընդհատ փոփոխության և ճշգրտման են ենթարկվել, որի հետևանքով առաջացել են գրության և արտասանության զուգաձևություններ: Դա վերաբերում է ինչպես անձնանուններին (*Հաֆիզ- Հաֆեզ, Ֆիրդուսի – Ֆիրդուսի, Ռուդակի-Ռուդաքի, Խայյամ-Խայամ, Նեզամի-Նիզամի* և այլն), այնպես էլ բանաստեղծական ժանրերն ու սեռերն անվանող տերմիններին

(բեյտ-բեյթ, քասիդ-դասիդ-դասիդեն, գազել-դազալ, ռոբայի-ռուբայի-ռուբայաթ-ռոբայաթ և այլն): Նոր ժամանակներում կան դեռևս չկանոնարկված գրություններ, սակայն տառադարձությունը աղբյուր լեզվի արտասանությանը մոտեցնելու միտումներն ակնհայտ են հակադրվելով օտար բառերի փոխառության դեպքում գրապատկերը հաշվի առնելու արմատացած սկզբունքին:

Հայոց լեզվի հնչյունական համակարգը թույլ է տալիս հիմնականում հարազատորեն վերարտադրել պարսկերեն բառերի հնչյունական պատկերը, օրինակ՝ *դազալ, դասիդեն* և այլն: Ավելի վաղ փոխառված *գազել, քասիդ* ձևերը պայմանավորված են միջնորդավորված թարգմանությամբ, ռուսերենի՝ իբրև միջնորդ լեզվի, հնչյունական համակարգում համապատասխան հնչյունների բացակայությամբ:

Այս զուգաձևություններից, բնականաբար, միայն մեկն է ընդունելի: Մյուսներն արդյունք են հայերենի զարգացման այս կամ այն փուլում իշխող մտայնությունների, միջնորդավորված թարգմանությունների և այլ երևույթների, երբեմն էլ թարգմանիչների չզիտության:

Պարսկաբանությունները, պարսից գրականության թարգմանությունից բացի, թափանցել են բուն հայ պոեզիա:

Արևելքը հայ դասականներից շատերի համար ստեղծագործական ներշնչման աղբյուր է եղել (Ավ.Իսահակյան, Հովհ.Թումանյան, Եղ.Չարենց, Գ.Սարյան և ուրիշներ): Նրանք հաջողությամբ օգտագործել են պարսկական պոեզիայի մի շարք ժանրեր՝ փոխառելով նաև նրանց անվանումները՝ *ռուբայաթ, բեյթ, դազալ(գազել), դիվան*:

«Աբու-Լալա Մահարի» պոեմի սկզբնական հրատարակություններում Ավ.Իսահակյանն իր այդ երկը *քասիդ* է անվանել: Եղ.Չարենցը իր քառյակները կոչել է *ռուբայիներ*, իսկ «Պիր ճանապարհի» ժողովածուի մեջ օգտագործել է արևելյան պոեզիայում գործածական բանաստեղծական տան տեսակ, որ կոչվում է *բեյթ*:

Պարսից պոեզիայի թարգմանությամբ զբաղվել են Ս.Ումառյանը, Ա.Գրաշին, Հ.Սովսիսյանը, Լ.Շեխոյանը, Արմ.Կոզմոյանը և ուրիշներ: Կատարված է հայ և պարսից գրական առնչությունների համակարգման և

վերլուծության հետաքրքիր աշխատանք, որի փաստական նյութը պարսկերենից կատարված թարգմանություններն են¹: Թարգմանության ընթացքում, լինելով պարսկերենի ազդեցության տակ, թարգմանիչներն օտար բառերն ու արտահայտություններն աննկատ բերում են մայրենի լեզու՝ կամ չգտնելով հայերենում օտար բառի համարժեքը, կամ էլ օտար բառը համարելով ավելի տեղին:

Հարկ ենք համարում նշել, որ թարգմանաբանությունը համեմատաբար նոր գիտություն է, որի ձևավորմամբ անհրաժեշտ է դառնում ճշգրտել շատ հասկացություններ ու տերմիններ՝ թյուրըմբռնումներ թույլ չտալու համար: Օրինակ հայերենում մինչև վերջերս *թարգմանություն* տերմինն օգտագործվում էր նշանակելու համար և՛ թարգմանության գործողությունը, գործընթացը, և՛ այդ գործընթացի արդյունքը: Վերջին իմաստով, որպես *ծածկեցծ* տերմինի հայերեն համարժեք գործածվում է պրոֆ. Ֆ. Խլղաթյանի առաջարկած *թարգմանվածք* տերմինը²:

Թարգմանվածքի որակն ու արժեքը պայմանավորված են թարգմանության բնույթով՝ անմիջական-միջնորդավորված, ուղղակի-տողացի և այլն: Այս խնդիրների տեսանկյունից փորձենք անդրադառնալ 10-րդ դարի պարսկական քնարերգության հիմնադիր Ռուդաբիի գրական ժառանգության մի ընտրանիի թարգմանության լեզվին (տողացի թարգմանությունը և տառադարձումները՝ Արմ. Կոզմոյանի, բանաստեղծական թարգմանությունը՝ Վ. Դավթյանի)³:

Նախապես ասենք, որ այս թարգմանվածքի լեզվին բնորոշ է այնպիսի պարսկաբանությունների առկայությունը, որոնք չունեն իրենց հայերեն համանշանակները, կամ էլ բառային այդ միավորները գործածվում են արևելյան կյանքի գունագեղությունը նկարագրելու, պարսկական կյանքի կոլորիտն արտահայտելու, խոսքը ոճականորեն հարստացնելու և այլ նպատակներով:

Ռուդաբիի քնարերգությունն ընդգրկում է հին արևելյան իմաստասիրության մեծ ավանդույթներ: Նրա ստեղծագործությունների հիմքում ընկած են հին պարսկական աղբյուրներն ու իսլամական ժողովրդական բանահյուսությունը, որոնցից գալիս են պարսկական արտահայտություններ,

պատկերներ, համեմատություններ, դարձվածքներ: Պարսկական
լեզվամտածողական այս ինքնատիպ երևույթները թարգմանության ընթացքում
դժվարություններ են առաջացնում. ստեղծվում են օտար կաղապարներ, օտար
շարահյուսական կառույցներ, որոնք իբրև նոր և թարմ ձևեր անմիջապես
ուշադրություն են գրավում: Պարսկական երանգ է հաղորդվում հայերեն
խոսքին: Այս երևույթը բնորոշ է թարգմանվածքի լեզվին:

Եվ այդպես լուռ, այդպես հլու, հանգստացած,

Նա կշռղա, մարջանի ալ գույնն ստացած:

Ալ առավել, քան Եմենի սուտակը ալ,

Առավել քան Բաղաշխանի ակները լալ,

Երբ հոտ քաշես, կթվա, թե վարդ է բուրում,

Կթվա, թե մուշկ ու համպար ես համբուրում:

Այստեղ կարծես թե ակնհայտ պարսկական ոչինչ չկա, բացի *լալ*,
մարջան, *մուշկ* բառերից, որոնք հայկական աշուղական պոեզիայի լեզվին ևս
հատուկ են, կամ *Եմեն*, *Բաղաշխան* տեղանուններից, բայց, այդուամենայնիվ,
խոսքն ընդհանուր ոչ հայկական, պարսկական երանգ ունի:

Ստեղծագործության ամբողջականությունն ու միասնականությունը
չխախտելով թարգմանության մեջ հաջող է շարադրված Ռուդաքիի
փիլիսոփայությունը.

Ես մազերս սև եմ ներկում ոչ թե քահել երևալու,

Ոչ թե նորից սիրուններին գիրկս առած, համբույր տալու,

Այնպես, ինչպես բոլոր մարդիկ սև են հագնում սուգ անելիս,

Իմ գլուխը սև եմ ներկել հեզ մարդկության վիշտը լալու:

Թարգմանչին օգնության են գալիս «համաարևելյան» պատկերավոր
մտածողության ընդհանրությունները (*հոնք-ամպ*, *արեգակ-դեմք*, *վարդ-շուրթ*,
լուսնկա-գեղեցկուհի, *ատամ-մարգարիտ* և այլն), իսկ խորհրդանիշների և
փոխաբերությունների, համեմատությունների և մակդիրների համակարգը
գրեթե նույնն է երկու լեզուներում:

Նա ամեն մի թյուրք գեղուհու *մի գույգ հասուն նուան* համար

Շռայլում է, վատնում անվերջ դիրհեմները իր անհամար:

Թարգմանիչը հմտորեն է օգտագործել մայրենի լեզվի բառապաշարային հարստությունը: Նուրբ ոճական երանգավորումներով, տեղին բառօգտագործմամբ վերարտադրել է հեղինակի ստեղծած պատկերներն ու արտահայտությունները: Հայ և պարսիկ ժողովուրդների պատկերավոր մտածողության, գեղագիտական ըմբռումների և չափանիշների որոշակի ընդհանրությունները թարգմանության ժամանակ ծնունդ են մի նոր որակ.

Այցի դիմաց սիրտս ուզեց, էժան տվի, ծրի տվի,
Պաշի դիմաց հոգիս ուզեց, հոգիս ասես սրի տվի,
Իմ լուսնկան սակարկելիս վաճառական է շատ հմուտ,
Ողջը տվի, ծրի տվի, սրի տվի, հրի տվի:

Ղասիդեների լեզուն բարդ է, վերացական. առեղծվածային պատկերների կերտումը նպատակային է: Բառերի յուրահատուկ գործածումները ընդգծված բովանդակություն են հաղորդում խոսքին, իսկ հանելուկային համեմատությունները և փոխաբերությունները, պարսկական կյանքի ներքին կողմը բնորոշող արտահայտությունները թարգմանության ժամանակ նոր լուծումներ են պահանջում: Թարգմանիչը հմտորեն կատարում է իր առջև դրված խնդիրը՝ կողք կողքի գործածելով հոմանիշներ և նույն պատկերները ծնող հասկացություններ:

Ատամներս մեկիկ-մեկիկ արմատահան եղան արագ,
Ի՜նչ ատամներ, ամեն մեկը մի լույս կանթեղ, մի լույս ճրագ,
Մարջան էին ու մարգարիտ, արծաթացող ու սպիտակ,
Լուսադեմի վարդեր էին ու անծրևի շիթեր հստակ:

Թարգմանվածքի մեջ կան բառեր ու արտահայտություններ, որոնց իմաստները մենք պետք է կռահենք խոսքաշարից, և պարսկերեն անվանումներ, որոնք անթարգմանաբար են կիրառվում. ծանոթագրություններում տրվում են դրանց բացատրությունները:

Ջեյիումը հորդ մեր սպիտակ ճփույզների,

Կեսից վար է, հոխորտալով զուր է գալիս:

Ջեյիումը՝ Լմու Դարյա գետի արաբերեն անվանումն է⁴: Սպիտակ ճփույզների երամակի սլացքը նմանեցված է վարար գետի հորձանքին:

Թե հակված ես *շարիաթին*, հավատացյալ ես հիրավի,
Նա քեզ համար նոր *Չանիֆե*, նոր *Սուֆյան* է ու նոր *Շաֆի*,
եթե բացի բերանը նա և բարբառի իմաստներն
Այնպես լսիր, ասես թե դու *Լոդմանին* ես լսում նորեն:

Աբու Չանիֆեն, Սուֆյանը և Ալ-Շաֆին հայտնի արաբ
աստվածաբաններ են, որոնցից ամեն մեկն իր ուսմունքն է ստեղծել այդ
բնագավառում: Նրանք ունեցել են իրենց ուսմունքի հետնորդները
հանիֆեականներ, շաֆիականներ⁵:

Թարգմանվածքի մեջ հանդիպում են պարսկական ժողովրդական
լեզվամտածողությանը հատուկ խորհրդանիշներ, որոնք ունեն իրենց
իմաստային նախասկիզբը: Գեղարվեստական պլանում այդ
փոխաբերությունները խոսքին իմաստային մեծ լիցք են հաղորդում, բայց
երբեմն կարիք են զգում մեկնաբանության:

Ես ինչպես նայեմ սիրածիս դեմքին, ա՛խ մահից հետո,

Շիրիմիս պիտի խոտի փոխարեն *նարզիզներ* դուրս գան:

Նարզիզը պարսկական պոեզիայում աչքերի խորհրդանիշն է: Սա է
պատկերի իմաստը, նույնիսկ մահից հետո խոտի փոխարեն *նարզիզներ*-աչքեր
դուրս կգան՝ սիրած էակին նայելու, նրանով հիանալու համար⁶:

Կամ՝ Դժբախտությունն այս ահավոր գուցե *Սատուռն* ինձ
առաքեց...

Թե երկնային *Մարսն* էլ մի օր ծայն տա նրան, կանչի կռվի....

Սատուռնը, ըստ մահմեդական աստղագուշակության, դժբախտության
և ծերության, իսկ Մարսը պատերազմի և ռազմի խորհրդանիշներն են⁷:

Պարսկական ղազալի (գազելի) զարգացման փառավոր ճանապարհը
մինչև Սաադի և Չաֆեզ սկսվում է Ռուդաքիից: Արևելյան այս ժանրը աչքի է
ընկնում լեզվի ճոխությամբ, նուրբ, գեղեցիկ պատկերներով,
համեմատություններով, չափական արվեստի կատարելությամբ:
Յուրաքանչյուր ղազալ ունի իր ամբողջական, միասնական բովանդակությունը,
որի հիմքում ընկած է որևէ հույզ, խոհ: Այն զարգանում է բեյթ առ բեյթ և
ամբողջանում միայն ղազալի վերջում: Սա ղազալ գրելու արվեստի
վարպետությունն է, իսկ վերջին բեյթում (մաքթա) բանաստեղծը հիշատակում է

իր անունը (թախալլուս): Ղազալի թարգմանության ժամանակ թարգմանիչը, անշուշտ, պետք է պահպանի վերոհիշյալ սկզբունքները: Չնայած թարգմանության լեզվի պարզությանը թարգմանիչը կարողացել է պահպանել մտքի ամբողջականությունը և ստեղծագործության ներգործուն ուժը:

Ո՛վ Ռուդաքի, դու, որ կյանքում չէիր զիջել դեռ ոչ ոքի,

Ինչու՞ այստեղ չվարեցիր ամոթահար ու անհոգի:

Ռուբային բանախյուսության ձև է և հնագույն ակունքներ ունի: Պարսկական ժողովրդական լեզվամտածողական տարրերը առավել ցայտուն են քառյակներում: Փոխաբերություններն ու համեմատությունները, ճշգրիտ մակդիրների գործածությունները բանաստեղծական թարմ շունչ ու գեղեցկություն են հաղորդում. հնարավոր է դառնում մերժեցումն օտարի գեղագիտական ըմբռնումներին:

Գեղեցկության ծով ես, հոգի՛ս, մարջանով է շուրթդ շիկնել,

Ատամներդ ծովից հանած մարգարիտի սուրբ հատիկներ,

Հոնքդ նավ է, իսկ ճակատդ ալ լուսեղեն խորշում ալիք,

Պարանոցդ՝ ջրապտույտ, և աչքերդ՝ փոթորիկներ...

Չափածո ստեղծագործությունների լեզվին հատուկ բառային կրկնությունները, շարահյուսական նույնատիպ կառույցները, շրջադասությունը, որոնց միջոցով խոսքն ավելի հուզական է դառնում, և ուժեղանում է արտահայտչականությունը, ընդունված ձևեր են թե՛ հայկական, թե՛ պարսկական քնարերգության մեջ: Գեղարվեստական այդ ընդհանրությունները հատուկ տեղ են զբաղեցնում պատկերավորության համակարգում և թարգմանությանը հաղորդում են համաչափ հանդարտություն:

Այն, ինչ ցավ էր, կսկիծ ու ցավ, փոխվում հանկարծ դեղ է դառնում,

Այն, ինչ առաջ դեղ էր ցավի, ցավ դարձած է վերադառնում:

Հնանում է ամենայն բան, ինչ որ նոր էր ժամանակին,

Եվ նորանում հանկարծակի, ինչ որ առաջ թվում էր հին:

Այգաստաններն առատաբեր անապատի են վերածվում,

Անապատում այգիների ծաղկած հրաշքն է տարածվում:

Թարգմանիչը կրում է իր դարաշրջանի մտածողության կնիքը և ձեռնարկելով թարգմանություն անշուշտ չի կարող ստրկաբար հետևել բնագրին. ավելին բնագրին գերի մնալը դեռևս թարգմանական արվեստի բարձրարժեք գործ ստեղծելու միակ զրավականը չէ: Բազմակողմանիորեն ծանոթ լինելով հեղինակի դարաշրջանի պատմությանը, մշակույթին ու կենցաղին, ճշգրիտ վերարտադրելով նրա ստեղծած պատկերներն ու համեմատությունները թարգմանիչն այսպես թե այնպես հարմարեցնում է դրանք իր լեզվի պահանջներին ու ներքին օրինաչափություններին: Ծնվում է մի նոր որակ, որը պահպանելով բնագրային ոգին, պատկերային համակարգը միաժամանակ դառնում է թարգմանչի ստեղծագործությունը:

Իրանական քնարերգության լավագույն էջերի թարգմանությունները, ճեղքելով ժամանակի և տարածության սահմանները, այսօր էլ մեծ հետաքրքրություն ու սեր են առաջացնում պարսից գրականության նկատմամբ:

¹ Տե՛ս Արմ. Կոզմոյան, Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան, Երևան, 1997:

² Տե՛ս Ա.Հ.Նազարյան, Հ.Գ.Բաղդասարյան, Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Երևան, 2000, էջ 9:

³ Ռուդաքի, Երևան, 1995:

⁴ Տե՛ս Նույն տեղում, էջ 91:

⁵ Նույն տեղում, էջ 89:

⁶ Նույն տեղում, էջ 92:

⁷ Նույն տեղում, էջ 88: